

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.
վայրը _____, այսուհետ՝
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
«Երաշխավոր», ի դեմս (եթե իրավաբանական անձ է) _____, որը գործում է
_____ ազգանունը, անունը, պաշտոնը
_____ հիման վրա, մի կողմից, և _____
կանոնադրության, լիազորագրի կամ այլնի _____ կազմակերպության անվանումը
_____ , այսուհետ՝ «Պարտատեր», ի դեմս _____
կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը _____ պաշտոնը, ազգանունը, անունը
_____ , որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից,
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխավորը պարտավորվում է Պարտատիրոջ առջև պատասխանատվություն կրել՝ Պարտատիրոջ և Պարտապանի միջև _____ թ. կնքված _____ պայմանագրի առարկան _____ թիվ _____ պայմանագրով՝ _____ , այսուհետ՝ «Պարտապան», պարտապան իր. անձի անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը պարտավորությունների կատարման համար:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Երաշխավորը պարտավորվում է պարտատիրոջ առջև պատասխանատվություն կրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված՝ Պարտապանի պարտականությունների կատարման համար նույն ծավալով, ինչ Պարտապանը:

2.2. Երաշխավորը պարտավոր է սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրի _____ կետով սահմանված՝ վճարման ժամկետը սկսվելու պահից Պարտատիրոջը _____ օրվա ընթացքում վճարել Պարտապանի չվճարած գումարը, ինչպես նաև սույն պայմանագրի _____ կետում նշված պայմանագրի _____ կետով նախատեսված տուժանքը:

Տուժանքը չի վճարվում, եթե Երաշխավորը վարկային պայմանագրի _____ կետով սահմանված ժամկետներում կատարել է վճարումը:

2.3. Եթե Երաշխավորը սույն պայմանագրի 2.2 կետի համաձայն չկատարի իր պարտավորությունը, ապա Երաշխավորը Պարտատիրոջը վճարում է լրացուցիչ տուժավճար՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար _____ տոկոսի չափով:

2.4. Պարտատերը պարտավոր է Երաշխավորին հանձնել Պարտապանի դեմ ունեցած իր պահանջները հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները՝ սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունները Երաշխավորողի կողմից կատարելու պահից _____ օրվա ընթացքում:

2.5. Պարտատիրոջ կողմից Երաշխավորին՝ վերջինիս ներկայացրած ցանկի համաձայն անհրաժեշտ փաստաթղթերը չհանձնելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պարտատերը Երաշխավորին վճարում է տուժավճար՝ _____ տոկոսի չափով:

3. Ժամկետները

Երաշխավորությունը դադարում է, եթե Պարտատերը պայմանագրի 1.1 կետում նշված պարտավորությունների կատարման ժամկետը սկսվելու օրվանից երեք ամսվա ընթացքում Երաշխավորին չի ներկայացնում վճարման գրավոր պահանջ:

4. Լրացուցիչ պայմաններ

Պարտապանը պարտավոր է Երաշխավորին հանձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրի մեկ օրինակը:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Երաշխավոր՝ _____
_____ հասցեն և վավերապայմանները

Պարտատեր՝ _____
_____ հասցեն և վավերապայմանները

Ստորագրություններ և կնիքներ

Երաշխավոր՝ _____
_____ ստորագրությունը և կնիքը

Պարտատեր՝ _____
_____ ստորագրությունը և կնիքը

Պարտապան՝ _____
_____ ստորագրությունը և կնիքը